# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Մեծ Մանթաշ, (093)637020 , metsmantash.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՅԻՍԻ 2018ԹՎԱԿԱՆԻ N 30

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԾՐՈՒՆԻ ԱՂՎԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԱՄՐԱԿԱՅՎԱԾ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխրհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին թիվ 29-12-2005թ. Նո.2387-Ն որոշումով.

**Որոշում եմ**

Մեծ Մանթաշի համայնքի բնակիչ Արծրունի Աղվանի Սարգսյանին պատկանող 08-079-0037-0005 կադաստրային ծածկագրով հողամասին և ամրակայված շենք-շինությանը տրամադրել Շիրակի մարզ գյուղ Մեծ Մանթաշ խճ 2, թիվ 14/1 հասցեն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2018 թ. մայիսի 4
գ.Մեծ Մանթաշ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Մեծ Մանթաշ, (093)637020 , metsmantash.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՅԻՍԻ 2018ԹՎԱԿԱՆԻ N 31-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՃՈՒՂԻ 2՝ ԹԻՎ 14/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արծրունի Աղվանի Սարգսյանի 03.05.2018 թվականի թիվ 27 դիմումը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >>Հայաստանի Հանրապետության օրենքի 32/17 հոդվածի և ՀՀ Կառավարության 02.02.2002 թ. թիվ 88 որոշման պահանջներով .

**Որոշում եմ՝**

Փոփոխել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի խճ,2 , թիվ 14/1 հասցեում գտնվող 55.62 քմ ընդհանուր մակերեսով անասնագոմի գործառնական նշանակությունը որպես բնակելի տան նշանակության :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2018թ.մայիսի 4
գ.Մեծ Մանթաշ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Մեծ Մանթաշ, (093)637020 , metsmantash.shirak@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՅԻՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 32-Ա

### ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԱԶԴԱՏ ՄԻՇԱՅԻ ՄԱՐԱԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-09-0001-0026 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.10541 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ 25.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N 828-Ն որոշմամբ հաստատված «Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման և հողամասերի գործառնական նշանակության փոփոխության կարգի» 2-րդ և 10-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգի>> 2-րդ, 3-րդ, 3.4-րդ և 7-րդ կետերի դրույթներով և հաշվի առնելով քաղաքացի Վարազդատ Միշայի Մարաբյանի՝ 2018 թվականի մայիսի 2-ի դիմումը՝ հեղուկ գազի լիցքավորման կայան կառուցելու համար սեփականության իրավունքով քաղաքացուն պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործատնական նշանակության 0.10541 հեկտար հողամասի և նրա վրա վրա առկա 25.5 քառակուսի մետր մակերեսով բնակելի օժանդակ շինության գործառնական նշանակությունները հասարակական կառուցապատման գործառնական նշանակություն փոխելու և ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվության) տրամադրելու վերաբերյալ.

**Որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Վարազդատ Միշայի Մարաբյանի սեփականության

իրավունքով պատկանող 08-09-0001-0026 կադաստրային ծածկագրով 0.10541 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը և նրա վրա առկա 25.5 քառակուսի մետր մակերեսով բնակելի օժանդակ շինությունը /հասցեն՝ համայնք Մեծ Մանթաշ, 19-րդ փողոցի թիվ 23, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N

17112017-08-0044/ փոխադրել հասարակական կառուցապատման գործառնակ նշանակություն՝ այդ հողամասում հեղուկ գազի լիցքավորման կայան կառոցելու համար:

2. Հողամասի հատակագիծը կցվում է նույն որոշմանը:

3. Հաշվի առնելով, որ հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը կատարվում է այդ հողամասում քաղաքաշինական գործունեություն իրականացնելու համար, ուստի քաղաքացի Վարազդատ·Միշայի Մարաբյանին (հետագայում՝ կառուցապատող) տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվության):

4. Պատավորեցնել կառուցապատողին՝

1) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով ապահովել նախագծի համաձայնեցումները իրավասու մարմինների հետ:

2) Հեղուկ գազի լիցքավորման կայանի կառոցման աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան:

3) սույն որաշման 1-ին կետով նախատեսված հողամասի գործառնական նշանակության փոփոխությամբ պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում կատարել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում:

4. Հողամասի գործառնական նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2018թ.մայիսի 4
գ.Մեծ Մանթաշ